

ՈՒԹԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Ստորագրողները գրում են ուղղակի
Тифлисе. Редакция „Мелк“)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Հայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնները համար վճարում են
խաւարանները ըստ 2 կողմի:

ՅՈՒՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Փողեր տուեցէք, փողեր:—Ներքին տեսչի-
թիւն: Ապօրինակ կոնսուլի: Նամակ Կանադայի:
Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին
տեսչի:—Արտաքին տեսչի:—Պրնսիպալ:
—Մշակիչ հեռագրի:—Յայտարարութիւններ:

ՓՈՂԵՐ ՏՈՒՆԵՑԻՔ, ՓՈՂԵՐ

«Մշակի» երեկվայ համարում
մենք յայտնեցինք այն լուրը, որ
խորէն վարդապետ Ստեփանէ և
կել է մեր բարձր և գնալու է
նոյնպէս ուրիշ հայաբնակ բարձր-
ներ հայոց հասարակութենէն նու-
րաւորութիւններ ժողովելու նպա-
տակով: Այդ նուիրաւորութիւն-
ները պէտք է գործ գրվեն ԼՂ-
միաձնի ճեմարանի մէջ ննջարանի
և սեղանատան կառուցման վրա:
Խորէն հօրը մենք անձնապէս
վաղուց է որ ճանաչում ենք: Դեռ
որպէս աշխարհական, յետոյ որ-
պէս հոգեւորական, նրա անասելի
եռանդը յայտնի է ամենքին: Այդ
գործունեաց, եռանդոտ մարդը ըն-
դունակ էր միշտ ոչնչից բան
ստեղծել նա ճարտար է և որպէս
խօսող և որպէս քարոզիչ... Նա
քարերին էլ զգացմունք կը ներ-
շնչէ, ապառաժներէն էլ ընդունակ
է նուիրաւորութիւններ հաւաքել:
Մենք անկեղծ կերպով խոստո-
ւանքում ենք՝ հայր խորէնից ա-
ւելի յարմար մարդ ԼՂմիաձնի
ընտրել չէր կարող ժողովուրդից
դարձեալ փողեր հաւաքելու հա-
մար...:

Բայց ի՞նչ հարկաւոր են այս-
քան փողեր, ի՞նչ մի առանձին
արդիւնք է տեսնում ժողովուրդը
ԼՂմիաձնի կողմից:

Բաւական չէ յափշտակել լոկ
խօսքերով... Հայերը ճեմարան
ունեն, ԼՂմիաձնում Հայաստանի
կենտրոնում ալ աղէ միա ու-
նենք...:

Բայց ի՞նչ ակադէմիա,—այդ
է հարցը:

Նախ կուզենայինք հարցնել
ժողովուրդը գիտէ արդեօք որ ա-
կադէմիայի անունով բոլոր հա-
ւաքած փողերը ԼՂմիաձնի վանքը
ճշմարիտ ակադէմիայի վրա է
գործ դնում, երկրորդ՝ արդեօք
պէտք է միայն դորանով ուրա-
խանանք թէ ակադէմիայի պա-

տերը կառուցված ենք տեսնում,
առանց հետաքրքրվելու այն հար-
ցով արդեօք այդ պատերից դուրս
կը գան ճշմարիտ սոցիալամիտ
ուսեալ, ազգասէր, ժամանակակից
ոգով զարգացած երիտասարդներ
թէ այդ ակադէմիան կրնայէ
ազգին կղերական ոգով խմբված,
սխալաստիական փոստ սղլու-
թեանը հետևող, վնասակար, ազ-
գակործան, բթացրած, ամեն
առաջադիմութեան և ազատ մար-
դկային գաղափարներին թշնամի,
խաւար և մութ մի սերունդ...:

Եթէ վերջինը կը լինի, լա է
որ ակադէմիայի պատերն էլ կա-
ռուցված չը լինէին:

Բացի սորանից զարմանալի է
որ մեր հոգեւորականութիւնը մի
տեսակ երկզիմի էակ է, մի տե-
սակ երկու գլխանի Լանուս է:
Երբ որ հարկաւոր է,—նա ժո-
ղովրդական է, նա և նրա բա-
րեկամները հեքըում են որ մեր հո-
գեւորականութեան մէջ կղերակա-
նութիւն կայ: Իսկ երբ որ հար-
կաւոր է հաւաքված և գործա-
ծած փողերի մասին ազգին հա-
շիւ տալ երբ որ ազգը իր առաջ-
նորդների բերանով պահանջում է
այդ,—այն ժամանակ մեր հոգեւո-
րականութիւնը շուտ է գալիս և
խկոյն իր միւս գէմք է ցոյց տա-
լիս... Այն ժամանակ նա էլ ժո-
ղովրդական չէ, որովհետեւ հաւա-
քված և գործածած փողերի հա-
շիւը պէտք է տալ նա ժողովու-
րդական չէ, այլ բուն կղերական
է դառնում երբ ազգը կամենում
է վերահսկողութիւն, կօնսուլ
ունենալ իր ժողովրդական հո-
գեւորականութեան գործունէու-
թեան վրա:

Մենք չենք ասում հայերին
փողեր մի տաք ԼՂմիաձնին, բայց
ասում ենք՝ փողերը տալուց առաջ
հաշիւ պահանջեցէք ԼՂմիաձնից
և փողերը տալուց յետոյ դարձեալ
հաշիւ պահանջեցէք նրանից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա.ՊՈԼԻՆՍԿԻ ԿՈՆՏՏԱԿՏ

Այս օրերս վարձանկեցաւ Թիֆլիսի ծա-
նօթ Ապօրինակի Կօնսուլի, որ երաժշտու-

թեան մէջ մեծ տաղանդ ունէր: Նա ծնվե-
ցաւ Վարշաւայում 1824 թվին, յուլիս 2-ին:
Նրա հայրը Փրիգոր Կօնսուլի այդ ժամանակ-
ները լիցէի տեսուչ էր: Իրեւ հանձնարեղ և
բաժնատէս, նա իսկոյն նկատեց իր որդոյ
անսովոր յարմարութիւնները երաժշտութեան
մէջ, դրա համար էլ նա ինքն անձամբ սկսեց
նրանց մէջ զարգացնել այդ արուեստը: Նա
հինգ օրի ունէր, որոնցից չորսը տղայք էին,
իսկ մէկը աղջիկ: Փոքր ժամանակից յետոյ Կո-
նսուլ և Ապօրինակի ջութակի վրա նշանաւոր
աճողներ դարձան, իսկ Անտօնը սկսեց ամենա-
յաջող կերպով դաշնամուրի վրա ածել: Կո-
նսուլ մի քանի տարի սրանից առաջ ընակ-
վում էր Փարիզում, մինչդեռ այդ ժամանակ
Անտօնը Լօնդօնում դափնիներ էր հնձում,
որտեղ և նա հիմնեց իր հաստատ բնակու-
թիւնը: Սակայն դրանց բոլորից ամենամեծ
նշանակութիւն ձեռք բերեց Ապօրինակի, որ
եղբայրներից ամենակրթուն էր. քառասներորդ
և յիսներորդ թվականի օտարազգի լրագիրնե-
րը լքցված են նրա անթիւ կօնցերաների մա-
սին ամենաշուքորով իւր ու ամենազովիլ իւ-
ցեղաներով: Այդ լրագիրներն ամենքն էլ
խոստովանում են, որ նա իր արուեստը հաս-
ցրել է ամենափայլուն non plus ultra կէտին:
Լրագիրները մի ասանձին օգեւորութեան են
ընելու նոյնպէս և նրա հեղինակութիւնները,
որոնց մէջ մանաւանդ ամենից աւելի աչքի
են ընկնում նրա գրաւի և փայլուն ձօրհանի
և Բատօրի կոչված մագուրկաները, որոնց ա-
ծելով նա բոլորովին կատարում էր հիացած
հասարակութեանը, որը նրան ամենակարեւի
փառաբանութիւններ (ovation) էր անում: Եւ
հայրների մէջ նրա փառքն ու նշանակու-
թիւնը այն աստիճանի հասաւ, որ երբեմն
բաւական էր նրա միակ հրաւերը դէպի իր
հայրենակիցները նուիրաւորութիւններ բերե-
լու, և իսկոյն Լեհաստանի թագաւորութիւնից
առատ նուիրաւորութիւններ էին ուղարկվում
նրան: Նա ինքն անձամբ սկսեց կօնցերաներ
տալ, և ստորագրութիւններ ժողովել: Նա հա-
յայսիսի նուիրաւորութիւնների գումարով, նա
հիմնեց իր ծննդեան տեղը, Վարշաւայում,
երաժշտական դպրոցը:

Ամեն մարդ, ով միջոց է ունեցել աւելի
մօտ կերպով ծանօթանալ երաժշտական դպրոցի
գործերի հետ, և ով փողը ի շատէ յարաբե-
րութիւններ է ունեցել երաժշտական շրջանի
հետ, խորը կերպով համոզված է, որ Վար-
շաւայի երաժշտական դպրոցը իր գոյութեամբ
և իր ներկայ օրինակի զարգացմամբ պար-
տական է միայն Ապօրինակի Կօնսուլի արք-
նաձան աշխատութեանը: Նախ կարելի է, որ
մի որոշեալ ժամանակից յետոյ, ապագայ ան-
րունդը կը մոռանայ նրա երաժշտական քան-
քարը, բայց նրա գործունէութեան յիշատակը
անջնջելի կը մնայ քանի որ կենդանի է նրա
ձեռնարկած օգտակար հիմնարկութիւնը:

գիւղացիք: Այցելուների բազմութեան պատճառով,
հարցաքննութիւնը եկեղեցու մէջ արին:

Չը նայելով որ այս դպրոցը ամբողջ երեք տա-
րի փակ լինելով, բացվեց 78 թիւի նոյեմբերին,
բայց գիւղական համեստ, աշխատասէր աշակերտ-
ները այդ կարճ միջոցում անբաժան յառաջադիմու-
թիւն ցոյց տուին, որ երբեք չէինք նպատակ
Այնքան փոստ, պարզ և գեղեցիկ պատասխա-
նութեամբ կարող էին գիւղական ոտաքորիկ աշա-
կերտները, որ եթէ ամեն Ալեքսանդրապօլի միճա-
կային դպրոցի երկրորդ դասարան աշակերտներից
ոչնչով պակաս չէին, խղճիս դէմ չեմ մեղանշել:
Գրում էին շատ գեղեցիկ և շատ աննշան սխա-
լներով:

Գլուրդի ուսուցիչ պ. Յովհաննէս Տէր Բարե-
ղեանցը, նախ քան հարցաքննութիւնը մի գեղեցիկ
ճառ կարդաց, որով բացատրեց պարտքը այդ դպ-
րոցի անցեալ և ներկայ անդիմադրելի գործիւնը.
Ժամօթացրեց որ այդ դպրոցը շատ օգտակար կե-
նող է լինել շրջակայ գիւղերին էլ, եթէ անիծեալ
նախանձը, կոյր չարութիւնը հեռանան, կորչեն
այդ գիւղից: Նախանձը այն աստիճան է կորաց-
րել շատերի աչքերը, որ ամբողջ գիւղից միայն և
րեք աշակերտ կար դպրոցում, մնացածները բոլորը
օտար գիւղացիներ էին: «Պոյ իմ տղիս ջուղթ
աչքն էլ բօռ է դէի ու ինձի պէս բոյ մեծնայ,
թաքիւն տիրացու Յովհաննէսը փարսպետ չը
դառնայ»: Գլխաւոր մեղաւորը կրկնաւոր է, մե-
նացածները սրանց գործիւններն են: Եթէ Աստու-
րենք, Ազգուսմանք, Փրկիչը, Խղթայանք, միշտ
հաշտ աչքով նայեն դպրոցի վրա, այնուհետեւ դպ-
րոցը կունենայ յարատեւութիւն և վիճակ:

Հարցաքննութիւնից յետոյ հոգաբարձու Կարա-
պետ Տէր-Թումանեանցը բոլոր այցելուներին ճաշ
տուեց և շատ լաւ հիւրասիրեց:—Եր մնայ ինձ
այժմ իմ խորին շնորհակալութիւնը նուիրել պ. Յով-
հաննէս Տէր-Բարեղեանցին, որ բարեխղճութեամբ
էր կատարել իր պաշտօնը:—Չը մոռանանք անել
որ աշակերտները բացի մի քանի աղքատից և եկե-
ղեցական երգիցից, ամբողջ էին նաև ձայնագրու-
թիւն: Առհասարակ հիմնալի երգում էին. բաւա-
կան է որ օտարը Աստուածը այնպէս մի մորմո-
քիչ կոնսակով երգեցին, որ այցելուներից մի քա-
նիսը չը կարողացան պահել իրանց պատասխա-
նելը բոլորովին ծրի դաս էր տուել պ. Սարգիս
Տէր-Կալթեանց որ առանձին շնորհակալութեան
արժանի էր:

Ճաշից յետոյ ժամը 2-ին դուրս գալով Կահար-
լուցի, մի և նոյն այցելուներով մտանք խիւղա-
րաքիւսա գիւղը, որ իր մեծութեամբ և հարստու-
թեամբ Շիրակայ գիւղերի Փարիզը կարող է հա-
մարվել: Այստեղից այս գիւղի դպրոցի հարցաքն-
նութիւնն էլ, բայց տարաբախտաբար ոչ մի բանից
ոչ մի միտքարկութիւն չը գտանք. կարող էին
սարսափելի դանդաղ և բոլորովին անբնական և
զանալով: Գրել շատ քիչ գիտէին այն էլ շատ
կոպիտ սխալներով: Կրօնից անդիլ էին միայն
սերեանցի զատազգի վրա: Թուաբանութիւն միայն
վեց աշակերտի էին սովորացրել: Տեղեկացանք որ
այս դպրոցն էլ ունի իր տեղացի թշնամիները, ո-
րոնք զանազան ոլոր մոլոր ճանապարհներով միշտ
աշխատում են դպրոցը քանդել: Այստեղ հարցաքն-
նութիւնը շատ կարճ տևեց: Տեղացիներից երեք
չորս հոգի միայն եկան հարցաքննութեան, ին-
քանք էլ աննշան, աղքատ մարդիկ էին:

Այցելու

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՈՒՆ

Թիֆլիս, 1 յուլիսի

Հասկանալով Վարդապետան ընկերութեան մի
գործը, ժողովից մեր բնական, ուսումնական
հայ աշակերտների և մի քանի մասնաւոր անձանց
մէջ 73 ռուբլ 50 կ. Գիտենք որ աշակերտական
օրերում մեր հայն գումարը չէ կարող լինել այդ
ընկերութեան այն նպատակ, որը ցանկալի էր,
բայց միայն մենք կամենում ենք դրանով ցոյց

